ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ի ԼԵՆԻՆԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ԱՌԹԻՎ

ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՏԻՍՐ ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ, ՊԱՏՎԱՐԺԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ, ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՎ ՕՐՇՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆ

Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի՝ Լենինի բարձրագույն շքանշանով պարգևատրվելու երջանիկ առթիվ, հանեցեք ընդունել Մայր Արոռ Ս. Էջմիածնի և Մեր հայրական ամենաջերմ ողջույնը և սրտագին շնորհավորությունը: Հայաստանյայց Եկեղեցին, իր հոգևոր պաշտոնեությամբ և հավատացյալներով, ոգևորությամբ և հպարտությամբ կմիանա այն մեծ խնդության, որ համակած է այս օրերին համայն հայ ժողովուրդը:

Սովետական Միության Գերագույն Սովետի Նախագահության կողմից շնորհված այս մեծ պարգևը պատմական մի ապացույց է այն բանի, որ անցյալում թշվառ ու անտեր և տնտեսապես քայքայված Հայաստանը, այսօր վերածնված ու վերաշինված իբրև ազգային պետություն, գտնվում է վերելքի և ծաղկման ճանապարհի վրա, աշխատանքի ու ստեղծագործության բոլոր ասպարեզներում, սովետական ժողովուրդների եղբայրական հզոր ընտանիքում, ապահով ու խաղաղ:

Թո՛ղ շեն մնա մեր երկիրը ու է՛լ ավելի զորանա, առաջադիմե և բարգավանի՝ ի. պատիվ իր հայրենասեր պետական ղեկավարների և մասնագետների և ի փառս աշխատասեր ու ստեղծարար հայ ժողովրդի:

Ողջունիվ և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ